ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 մայիսի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

70
(2920)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԹԵԿՆԱԾՈՒՆ ՄԱՅԻՍԻ 26-ԻՆ ՀԱՅՏՆԻ ԿԴԱՌՆԱ

Քաղաքական ուժերը Բագրատ Սրբազանին առաջարկել են ժամանակավոր կառավարության վարչապետի պաշտոնում իր թեկնածությունը հաստատող փաստաթուղթ ստորագրել:

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժումն առաջնորդող Բագրատ Սրբազանը մայիսի 18-ին հանդիպում էր ունեցել քաղաքական տարբեր ուժերի ներկայացուցիչների հետ:

«Ժողովուրդ» օրաթերթին նոր մանրամասներ են հայտնի դարձել այդ օրը կայացած փակ հանդիպումից:

Այսպիսով, մեր աղբյուրների փոխանցմամբ՝ ներկա քաղաքական բոլոր ուժերի ներկայացուցիչները միակարծիք են եղել, որ ժամանակավոր կառավարության ձեւավորման դեպքում վարչապետի թեկնածուն պետք է հենց Բագրատ Սրբազանը լինի ու առաջարկել են կազմել այդ ամենը արձանագրող փաստաթուղթ եւ բոլորով ստորագրել այն: Այսինքն՝ թղթի վրա արձանագրեն, որ ապագա վարչապետը Բագրատ Գալստանյանն է, ու այդ փաստաթղթում բոլոր ներկաների ստորագրությունները դրվեն:

Բագրատ Սրբազանը չի համաձայնել եւ որեւէ թուղթ չի ստորագրել:

Հանդիպումից հետո Սրբազանը նաեւ հայտարարել էր, որ մինչ իր թեկնածությունն առաջադրելուն համաձայնություն տալը՝ պետք է Վեհափառի համաձայնությունը ստանա:

Երեկ էլ հայտարարեց, որ արդեն կիրակի՝ մեծ հանրահավաքի օրը, կհայտարարվի վարչապետի թեկնածուի անունը. այնպես որ, հետաքրքիր անակնկալներով լի հանրահավաք է սպասվում:



Որ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը ձախողել է իրեն վերապահված ոլորտը, բազմիցս ենք անդրադարձել. ու որքան երկար է նա աշխատում այդ պաշտոնում, այնքան ավելի է ձգվում ձախողումների շարքը: Հերթական ձախողումը կապված է առողջության պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման հետ: Այս տարվա հունվարին նախարարը հայտարարեց, թե 2024 թ. հուլիսից կմեկնարկի բժշկական պարտադիր ապահովագրության համակարգը: Նշեց, որ այն կիրագործվի փուլերով. սկզբում պետպատվերի շահառուները կներառվեն համակարգում: «Նրանք մինչեւ 18 տարեկան երեխաներն են, առաջին, երկրորդ եւ երրորդ կարգի հաշմանդամություն ունեցող անձինք են կամ ֆունկցիոնալության այդ աստիճաններն ունեցող քաղաքացիները, եւ ունենք մի շարք այլ խմբեր», - մանրամասնել էր նա: Բայց, պարզվում է՝ մինչեւ հիմա ընդունված չէ այս ոլորտը կարգավորող օրենսդրական փաթեթը. այն անգամ կառավարության հաստատմանը չի ներկայացվել: Իսկ երեկ էլ Ավանեսյանը, լրագրողների հետ ճեպազրույցում, հարցին, թե առաջին փուլի մեկնարկը երբ է նախատեսված, ասել է. «Քանի որ սա օրենսդրական մեծ փաթեթ է, շատ դժվար է դրա ընդունման ժամկետները հստակ սահմանել, որովհետեւ դեռ ԱԺ-ում պետք է քննարկումներ տեղի ունենան, եւ նախագծի շուրջ ԱԺ-ում էլ թե՛ հանրային լսումներ պետք է լինեն, թե՛ նաեւ պատգամավորների կողմից որոշակի առաջարկներ»: Այսինքն՝ ակնհայտ է, որ այդ համակարգն այս տարվա հուլիսից չի մեկնարկի, ինչպես խոստացել էր նախարարը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

2023 թվականի հոնվարին մամուլը գրել էր, որ ՆԳՆ փոխնախարարի պաշտոնյա ամուսինը չի հայտարարագրել իր բաժնեմասը: Արփինե Սարգսյանի ամուսինը՝ Արշակ Վարդապետյանը, 2022 թվականի հունիսի 28-ին նշանակվել է արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի խորհրդական, իսկ 2022թ. հոկտեմբերի 12-ին նշանակվել է Բարձրագույն դատական խորհրդի նախագահի խորհրդական՝ Կարեն Անդրեասյանի՝ ԲԴԽ նախագահ ընտրվելուց 5 օր անց: Արշակ Վարդապետյանը 2018 թվականի ապրիլի 12-ին հիմնադրել է «Արմոթորս» ՍՊԸ-ն, որը, պետական եկամուտների կոմիտեի տվյալներով, զբաղվում է մանրածախ առեւտրով, բայց գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է: Այս ընկերության 100 տոկոս բաժնեմասը պատկանում է հենց Վարդապետյանին, որի մասին նա չի նշել իր հայտարարագրում: Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկության հիման վրա, հայտարարագրված տվյալների ստուգման արդյունքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը որոշել է իրականացնել Արշակ Վարդապետյանի եւ Արփինե Սարգսյանի կողմից ներկայացված արձանագրված պարզաբանման ենթակա հարցերի վերլուծություն: Վերլուծության արդյունքում արձանագրված պարզաբանման ենթակա հարցերի վերաբերյալ հանձնաժողովն Արշակ Վարդապետյանից եւ Արփինե Սարգսյանից հայցել է պարզաբանում: Ստացված պարզաբանումների գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը որոշել է, որ Արշակ Վարդպետյանի եւ Արփինե Սարգսյանի գույքային դրության վերաբերյալ ներկայացված տվյալների արժանահավատության եւ օրինականության վերաբերյալ կասկածներ առկա չեն եւ թույլատրել է Արշակ Վարդապետյանին հայտարարագրված տվյալներում կատարել փոփոխություն: Իհարկե, եթե այս տեղում լիներ ընդդիմադիր որեւէ գործիչ կամ քաղաքական դեմք, դժվար թե նույն հանձնաժողովը խույս տար վարույթ նախաձեռնելու գործընթացից, ընդհակառակը...



Գյումրու ավագանու՝ «Քաղաքացիական պայմանագիր» եւ «Բալասանյան դաշինք» խմբակցությունները հրաժարվել են Շիրակի թեմի առաջնորդ Միքայել Սրբազանի հետ հանդիպմանը մասնակցելուց: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Գյումրու ավագանու ընդդիմադիր անդամները երեկ Շիրակի առաջնորդարանում հանդիպել են Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանի հետ: Մեր տեղեկություններով՝ հանդիպումը տեղի է ունեցել Միքայել Սրբազանի նախաձեռնությամբ, որին մասնակցել են Գյումրու ավագանու ՀՀԿ եւ «Զարթոնք» խմբակցությունները: «Ապրելու երկիր» խմբակցության ավագանու երկու անդամները միայն չեն մասնակցել դրան, քանի որ քաղաքում չեն եղել. իսկ ՔՊ-ն եւ «Բալասանյան դաշինքը» հրաժարվել են: ՔՊ-ի դեպքում եթե սա նորմալ է, ապա իբրեւ ընդդիմադիր հանդիսացող «Բալասանյան» դաշինքի դեպքում այս երեւույթն անհասկանալի է. ինչո՞ւ է վախեցել: Տեղեկացանք նաեւ, որ ավագանու ընդդիմադիր անդամները Միքայել Սրբազանի հետ քննարկել են երկրում տիրող իրավիճակը, ինչպես նաեւ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման հետ կապված հարցեր: Հանդիպմանը ներկա ավագանու անդամները հայտնել են, որ սատարում են շարժմանը:

ԶՐՈՒՅՑ

ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՀԱՎԱԿՆՈՐԴԸ ԵՎ ԾՐԱԳԻՐԸ

Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ Սրբազան Գալստանյանը Անի Գրանդ հյուրանոցում հանդիպել է հայրենադարձների, ադա նաեւ ՏՏ ոլորտի մասնագետների հետ: Հայրենադարձների հետ հանդիպումից հետո Բագրատ Սրբազանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում մանրամասներ է հայտնել՝ կիրակի օրը կայանալիք հանդեսահավաքից:

Հ.Գ. Սրբազանը զրուցել է ՀԼՄ ներկայացուցիչների, լրագրողների հետ:

Անդրադառնալով վարչապետի հավանական թեկնածության վերաբերյալ լրագրողների հարցերին՝ Բագրատ սրբազանը նշել է. «Վեհափառի հետ դեռ չենք քննարկել: Խոսել ենք, կքննարկենք եւ հետո այդ օրակարգը այս պահին առաջնային օրակարգ չէ: Միգուցե ուրբաթ կամ շաբաթ օրը դա առաջնային դառնա, սակայն այս պահին օրակարգը մեր ժողովրդին հանդիպելն է: Ամսի 26-ին կիմանան՝ ով է վարչապետի թեկնածուն. երեւի, կիմանան՝ ինչ ծրագիր կա, կիմանան՝ ինչպես ենք առաջ գնալու, ինչպես է իշխանությունը փոխանցելու՝ ֆորմալացնելու իշխանության փոխանցումը»:

Բագրատ սրբազանը անդրադարձել է նաեւ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ իմպիչմենտի նախագծին եւ նշել, որ կա քայլերի հաջորդականություն եւ ռազմավարություն, որոնք զուգահեռ իրագործվում են. «Իմպիչմենտ կլինի, հրաժարում կլինի, մանդատներ վայր դնելու հարց կլինի. բոլոր տարբերակները կան»:

Խոսելով իշխանական ուժի կողմից իմպիչմենտի գործընթացին միանալ-չմիանալու մասին՝ Բագրատ սրբազանը նշել է, որ երկրում իշխանությունը ժողովուրդն է:

«Եկեք վերլուծություններ չանենք եւ մանրամասնությունների մեջ չմտնենք: ինչ ճանապարհով որ պիտի գնանք, ամսի 26-ին կասվի, ինչու եք ուզում, որ երեք-չորս օր շուտ ասեմ, որ մարդիկ էլ պատրաստվեն», - ասել է սրբազանն ու անդրադարձել Խաչատուր Սուքիասյանի՝ երկու օր առաջ Ազգային ժողովում արված հայտարարությանը:

«Ես չեմ ուզում, որ մեր շրթունքի վրա տարբեր անուններ հայտնվեն, բացի այդ իրավապահ համակարգը, մինչեւ այդ մարդու հայտարարությանն անդրադառնալը, լեցուն այլ բաների պիտի անդրադարձած լիներ: Ամեն դեպքում հայց կներկայացվի արտախորհրդարանական ուժերի, քաղաքացիների, որեւէ մեկի կողմից, որպեսզի հասկանան՝ մեր երկրում գործում է իրավունքը, թե ոչ. թե գործում է միայն նրանց համար, ովքեր կարծում են, թե իրենք իրավունքի տերն են:

Ամսի 26-ին մենք մուտք ենք գործում շարժման երրորդ փուլ, որի մաս են կազմում գործողությունները՝ նոր թեկնածուները, հին թեկնածուները»:

Հիշեցնենք, որ 2024 թվականի մարտի 19-ին Նիկոլ Փաշինյանն այցելեց Տավուշի մարզ, հանդիպեց տեղացիներին, գնաց Կիրանց, Ոսկեպար: Վարչապետը ներկաներին ցույց է տվել Հայաստանի ուրվագիծը եւ նշել, որ այն մեր իմացած Հայաստանի Հանրապետությունն է: «Սահմանազատման եւ սահմանագծման գործընթացը հետեւյալն է. սահմանագծման հանձնաժողովները պետք է գնան եւ տեղում որոշեն, թե որտեղ է սկսում Հայաստանի Հանրապետությունը, եւ դա պետք է դառնա Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանական Հանրապետության միջեւ պետական սահման»:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցից հետո, երբ հայտարարվեց սահմանազատման եւ սահմանագծման գործողությունների սկիզբը՝ ապրիլի 20-21-ը, Կիրանցի հատվածում ինտենսիվ փակ պահեցին դեպի գյուղ տանող ճանապարհը: Ոստիկանական ուժային գործողությունից հետո իրավապահները վաղ առավոտից հատուկ ռեժիմ էին սահմանել դեպի գյուղ տանող բոլոր ճանապարհների վրա: Կիրանց կարողանում էին մուտք գործել միայն տեղացիները, ընդ որում՝ նրանք ճանապարհին պարտավոր են ոստիկաններին ցույց տալ իրենց անձնագիրը, որում նշված է, որ բնակության վայրը Կիրանց գյուղն է:

Գյուղ մուտք գործել չհաջողվեց նաեւ հոգեւոր առաջնորդներին: Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ սրբազանը, որն այդ օրերին Կիրանցում մասնակցում եւ առաջնորդում էր հավաքները, չկարողացավ գյուղ մտնել:

Համարելով, որ Կիրանցում սակավ թվով հանրահավաքը արդյունք չի ունենա՝ Բագրատ Սրբազանը հայտարարեց՝ Կիրանցից քայլերթով մայրաքաղաք Երեւան գալու մասին, իսկ մայիսի 4-ին մեկնարկեց «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման երթը դեպի Երեւան:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻՑ ՄԻՆՉԵՎ ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԻՆՔՆԱՀՌՉԱԿ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը սիրում է հաճախ իրեն համեմատել Աստծո, Հիսուս Քրիստոսի եւ պատմական տարբեր կերպարների հետ: Իր ելույթներում Փաշինյանը բազմիցս ՔՊ-ին համեմատել է «Աստծո իշխանության» հետ, իսկ իրեն՝ Հիսուս Քրիստոսի:

Այսպիսով, դեռ 2019թ.-ին Նիկոլ Փաշինյանը կառավարության նիստի ժամանակ իրեն համեմատել էր Հռոմի պապի հետ. «Նախարարություններ կան, որ նույնիսկ ճիպոտով տեղից հնարավոր չէ շարժել: Մենք ունենք նախարարություններում լիքը պարապ մարդիկ, որոնց միակ ակնկալիքն այն է, թե երբ է ժամը լրանալու, որ գնան տուն: Եվ պետք չէ Հռոմի պապից կաթոլիկ լինել. տվյալ դեպքում Հռոմի պապը ես եմ: Եկեք ձեւ չանենք, թե ունենք ռազմավարություն մշակելու պոտենցիալ», - նշեց նա:

Նախորդ տարի ԱԺ-ում Նիկոլ Փաշինյանն իր իշխանությանը համեմատել էր Աստծո հետ՝ հայտարարելով՝ եթե եկեղեցու հարաբերությունները լավ չեն կառավարության հետ, ապա լավ չեն Աստծո հետ:

Այս տարի՝ մարտի 31-ին էլ Նիկոլ Փաշինյանը Արտաշատում՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ, Հիսուս Քրիստոսի ուղին համեմատել էր այն դժվարությունների հետ, որոնց բախվել է իր քաղաքական ուժը:

«Ինձ համար պակաս կարեւոր չէ Հիսուս Քրիստոսի քաղաքական ընկալումը, որովհետեւ Հիսուս Քրիստոսը ոչ միայն Աստծո որդին է, այլեւ առաջնորդի իդեալական կերպար, եւ իմ ընկալմամբ՝ նաեւ երկրագնդի վրա քայլած երբեւէ ամենամեծ հեղափոխականը, որը ակնհայտորեն շատ բան է փոխել իր գործունեությամբ»,-իր խոսքում նշել է Նիկոլ Փաշինյանը:

Նա համեմատականներ է տարել իր կուսակցության հետ եւ ասել, որ իրենց կուսակցությունը մի քանի անգամ «մեռել է» եւ բազմիցս «հառնել»:

Մեկ օր առաջ էլ ԱԺ-ում Նիկոլ Փաշինյանը հերթական համեմատությունն արեց՝ հայտարարելով՝ այսօրվա Հայաստանի Հանրապետությունը Պապ թագավորի երազանքի իրագործումն է. «Պապ թագավորն այլեւս չի սպանվելու: Դա ես երաշխավորում եմ. ինչ վեղար էլ հագնեն, քանի կիլոգրամանոց խաչ էլ կախեն, Պապ թագավորը չի սպանվելու: Այսօրվա ՀՀ-ն Պապ թագավորի երազանքի իրագործումն է, եւ էդ երազանքն այլեւս չի կարող սպանվել, սա է մեր քաղաքական առաքելությունը»,- եզրափակել էր նա:

Ք.Մ.

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ «ԳՈՐԾԱԿԱԼ» ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գաբրիել քահանա Վարդանյանը անդրադարձել է Հայաստանից դուրս ձեռնադրված հոգեւորականներին օտարերկրյա գործակալ անվանելու մասին Նիկոլ Փաշինյանի ելույթին:

«Երեկ Փաշինյանը նորից պնդում էր, թե Հայաստանից դուրս ձեռնադրված եւ օծված հոգեւորականներն ազդեցության գործակալներ են եղել: Ուրեմն, այդ տրամաբանությամբ գործակալ է եղել նաեւ նույն ինքը՝ Պապ թագավորը, քանզի պատմությունից հայտնի է, որ նա էլ Հայոց գահին բազմել է Հռոմի օգնությամբ: Փաշինյանական տրամաբանությամբ՝ ազդեցության գործակալներ են եղել նաեւ Գրիգոր Լուսավորիչը, Տրդատ Գ թագավորը, Զաքարե Զաքարյան իշխանը, Հովսեփ Էմինը, Դավիթ Բեկը եւ Հայոց պատմության մեջ անմահացած շատերը: Նման բարձր հանգամանքով անձն այսպիսի հայտարարություններ անելուց առաջ՝ առնվազն պետք է վերլուծի տվյալ ժամանակաշրջանի պատմական իրողությունները, դրանցից բխող գործողությունները, ապա նոր իրեն իրավունք վերապահի անտեղի վերագրումներ կատարելու կառույցի եւ անձանց մասին, որի եւ որոնց համար Հայոց պետությունը եւ պետականությունը մշտապես համարվել են Սրբություն սրբոց:

Ինչ է ստացվում. փաշինյանական տրամաբանությամբ՝ ենթադրյալ «գործակալները» հայրենիք են պահել, իսկ պետության եւ պետականության մասին «մտածողները» արդեն քանի տարի է հանձնել են ու շարունակում են հանձնել»:

«ՎԱԽԵՆՈՒՄ Է ԽԱՉԻՑ, ՈՐԻ ՄԱՍԻՆ ԽՈՍԵԼ Է». ՍՐԲԱԶԱՆ

«Երեկ, որքան տեղյակ եմ, մարդու որդին (նկատի ունի Նիկոլ Փաշինյանին-խմբ.) այս խաչի մատերիալի մասին է խոսել, որից վախենում, սարսափում է»: Այս մասին հայրենադարձների հետ հանդիպումից հետո՝ լրագրողների հետ զրույցում, նշեց Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ Սրբազանը:

Նա ցույց տվեց իր պարանոցի խաչը եւ ասաց. «Այս խաչը փամփուշտներից է սարքված, այս խաչը խաղաղության ու հաղթանակի խաչ է: Այս խաչն իմ ուխտի խաչն է, եւ այս խաչը տեսնելիս սարսափում է այդ մարդը:

Ի՞նչ կարեւոր էր Ազգային ժողովի ամբիոնից սրա մասին խոսել: Դա նշանակում է, որ մենք փողոցից էլ այն կողմ ենք հասել, «գրունտի» վրա էլ չենք արդեն: Սա է այսօրվա որակը»:

Հիշեցնենք, որ սա ուղղված արձագանք էր վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ «Պապ թագավորը չի՛ սպանվելու, այսօրվա Հայաստանի Հանրապետությունն իրագործումն է Պապ թագավորի երազանքի» ԱԺ-ում արված հայտարարությանը:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Կոնգրեսական Բրեդ Շերմանը հանձնառություն է ստացել ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենից՝ մարդասիրական օգնության տրամադրման ոլորտում:

«Ես հանձնառություն եմ ստացել պետքարտուղար Բլինքենից, որ վարչակազմն աշխատելու է, որպեսզի Կոնգրեսի կողմից տրամադրվող 9 միլիարդ դոլարի մարդասիրական օգնությունը բաշխվի՝ հաշվի առնելով, թե որտեղ կա դրա հրատապ անհրաժեշտությունը՝ Տիգրեյում, Ռոհինջայում, Արցախում, թե Սուդանում», նշել է կոնգրեսականը՝ X-ի էջում:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՍԱՌԵՑՄԱՆ ԿՈՉ

Ֆրանսիայի Սենատի անդամ Վալերի Բուայեն Ադրբեջանին մեղադրել է Ֆրանսիայում ապակայունացման փորձերի մեջ, մասնավորապես՝ Նոր Կալեդոնիայում խժդժություններ հրահրելու եղանակով: Բուայեն կոչ է արել ադրբեջանական ակտիվները սառեցնել եւ այդ միջոցներն ուղղել Նոր Կալեդոնիայում վնասը վերականգնելուն, որը հասնում է գրեթե 1 մլրդ եվրոյի:

Վալերի Բուայեն այս մասին ասել է Ֆրանսիայի Սենատի նիստում՝ Ֆրանսիայում օտարերկրյա միջամտության կանխարգելմանն ուղղված օրինագծի քննարկման ժամանակ ունեցած ելույթում՝ նշելով, որ Ֆրանսիայի դեմ գործողություններին ներգրավված են նաեւ Ռուսաստանը, Թուրքիան եւ Չինաստանը:

«Նոր Կալեդոնիան բռնության է ենթարկվել Ադրբեջանի, Ռուսաստանի եւ Չինաստանի ազդեցության ներքո, որոնք ձգտում են ապակայունացնել Ֆրանսիան եւ օգտագործել նրա ռեսուրսները, ներառյալ՝ նիկելը: Հեռուստատեսային հաղորդումները ցույց են տվել, որ Նոր Կալեդոնիայում որոշ «անկախական» գործիչներ կրել են ադրբեջանական դրոշներով շապիկներ, իսկ ադրբեջանական լրատվամիջոցները տարածել են Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի նկարներով ցուցարարների պատկերներ: Այս պայթյունավտանգ իրավիճակը սրվում է օտարերկրյա միջամտություններով, որոնք չեն սահմանափակվում միայն Նոր Կալեդոնիայով:

Ֆրանսիան դարձել է տեղեկատվական պատերազմի թիրախ, եւ այն նոր է սկսվում, Իսկ այդ հարձակման հետեւում կանգնած է Ադրբեջանը:

Հարձակման առաջնագծում Ադրբեջանն է՝ մի երկիր, որը բռնատիրական ռեժիմ է՝ կախված գազի վաճառքից, Արցախում էթնիկ զտումներ է իրականացնում, հայերին տեղահանում եւ միջազգայնորեն ճանաչված պետության ինքնիշխանությունը ոտնահարում»,- հայտարարել է Բուայեն:

ՃՈԽ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՍԵՆՅԱՆԻ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

110 մլն դրամ՝ խոհանոցի կահույքի, 70 հազար դոլար՝ ճաշի սպասքի, 552 մլն դրամ՝ նկարների հավաքածուի համար. Արսենյանի թանկարժեք գույքը:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գուրգեն Արսենյանն արդեն ներկայացրել է 2023 թվականի գույքի, եկամուտների եւ շահերի հայտարարագիրը, թեպետ դեռ մինչեւ մայիսի 31-ը ժամանակ ուներ:

Գուրգեն Արսենյանը եւ ՔՊ-ական մի քանի պատգամավոր եւս, բացի նրանից, որ ունեն միլիոնավոր եկամուտներ, ունեն նաեւ ահռելի արժողությամբ թանկարժեք իրեր:

2023 թվականի հայտարարագրում 4 միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող գույքի(թանկարժեք գույք) բաժնում հայտարարագրել է 16 թանկարժեք գույք:

Թանկարժեք գույքի շարքերում են հետեւյալ առարկաները.

Ոսկյա ձուլակտոր՝ 32 մլն 055 հազար դրամ,

Ճաշասենյակի կահույքի հավաքածու՝ 300 հազար դոլար,

Արծաթյա սպասքի հավաքածու՝ 48 հազար դոլար,

Ճաշի սպասքի անվանական հավաքածու՝70 հազար դոլար,

Ժամացույց՝ 51 մլն 300 հազար դրամ,

Ժամացույց՝82 մլն դրամ,

Նկարների հավաքածու՝143 մլն դրամ,

Ակոսափող հրացան՝6 մլն դրամ,

Նկարների հավաքածու՝154 մլն դրամ,

Հեռուստացույց՝5 մլն դրամ,

Հյուրասենյակի կահույքի հավաքածու՝ 18 մլն դրամ,

Ննջասենյակի կահույքի հավաքածու՝ 62 մլն դրամ,

Ոսկյա հուշադրամների հավաքածու՝18 մլն դրամ,

Հեռադիտակ՝8 հազար 500 դոլար,

Նկարների հավաքածու՝235 մլն 900 հազար դրամ,

Խոհանոցի կահույքի հավաքածու՝ 110 մլն դրամ:

Հարկ է նշել, որ 82 մլն դրամանոց ժամացույցը եւ 110 մլն դրամանոց խոհանոցի կահույքի հավաքածուն ձեռք է բերվել հեղափոխությունից հետո՝ 2019 թվականին, իսկ 32 մլն 55 հազար դրամ արժեցող ոսկյա ձուլակտորները՝2020 թվականին:

Հավելենք, որ ԱԺ պատգամավոր Գուրգեն Արսենյանի տարեկան եկամուտները կազմել են 14 մլն 443 հազար դրամ, որը կուտակվել է ԱԺ աշխատակազմից ստացված աշխատավարձից 9 մլն 983 հազար դրամ): եկամտի մյուս մասը կազմել է «ՅՈՒՆԻՔՈՐՆ ԳՐՈՒՊ»-ից ստացված շահաբաժնից, եւ վարձակալության դիմաց ստացված վճարից (4 մլն 460 հազար դրամ):

Հիշեցնենք, որ Գուրգեն Արսենյանը մամուլում հայտնի դարձավ՝ ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից դուրս գալու շուրջ առաջացած աղմուկից:

«Ժողովուրդ» օրաթերթը հունվարին նույնպես անդրադարձել էր Արսենյանի հայտարարագրին: Նշված էր, որ Արցախում բնակվող հայերին համեմատում էր «Թուրքիայում բնակվող հայերի» հետ, իրեն թույլ է տալիս ճոխություններ, որոնք ավելի են իր տարեկան եկամուտներից:

Նախկինում ՔՊ-ական պատգամավորը հայտարարագրել էր 17 անշարժ գույք, որից երկուսը՝ բնակարան. մեկը Գյումրիում, մյուսը Երեւանում: Մյուս անշարժ գույքերը կամ հասարակական նշանակություն ունեցող շինություն էին, կամ հողամաս. սակայն Արսենյանն ուներ հայտարարագրված գույք, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ նոր կառուցված, ձեռք բերված եւ անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված այն շինությունն էր, որը դեռեւս չէր ստացել իրավունքների պետական գրանցում:

Արսենյանը հայտարարագրել էր 4 մեքենա. BENTLEY 2019 թվականի արտադրության, MERCEDES-BENZ 2015 թվականի արտադրության, NISSAN 2018 թվականի արտադրության, RANGE ROVER 2014 թվականի արտադրության:

Նրա եկամտի մեծ մասը կազմվում էր բաժնեմասային եկամտից: Ըստ հայտարարագրի՝ Արսենյանն ունի 769 մլն 456 հազար դրամ արժողությամբ արժեթուղթ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՆԻՖ–Ի ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՐՑԸ՝ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ»-ը (ANIF) կլուծարվի:

Համապատասխան որոշման նախագիծը ներառված էր կառավարության՝ մայիսի 23-ի նիստի օրակարգում: «Կառավարությանն առաջարկվում է «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող 100 տոկոս բաժնետոմսերի փաթեթի կառավարման լիազորությունը վերապահել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին:

Առաջարկվող փոփոխությունների իրականացումը պայմանավորված է 2024 թվականի մարտի 14-ին ՀՀ վարչապետի գլխավորությամբ կայացած՝ «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի հաշվետվության N Վ/35-2024 արձանագրության 3-րդ կետի պահանջներով՝ ընկերության գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ համապատասխան քայլերի ձեռնարկման վերաբերյալ, ինչպես նաեւ Կոմիտեի կանոնադրությամբ վերջինիս վերապահված լիազորություններով»,- նշված է նախագծի հիմնավորման մեջ: ANIF-ի ՀՀ սեփականություն հանդիսացող բոլոր 100 տոկոս բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահված է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը:

Ներկայումս ընթանում են ընկերության լուծարման գործընթացի իրականացման հետ կապված աշխատանքներ: Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ն ՀՀ կառավարության ներքո գործող ընկերություն է, որի գործունեությունը միտված է խոշորագույն ներդրողների եւ գործընկերների հետ համատեղ լայնածավալ նախագծերի իրականացմանը: ԱՆԻՖ-ի նպատակն էր լինել ակտիվ ներդրող եւ գործընկեր՝ խթանելով ներդրումները Հայաստանի տնտեսության կարեւորագույն ոլորտներում: Ընկերությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 18-ին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ Սրբազանը, Իրանի դեսպանատուն այցելելուց եւ այնտեղ սգո մատյանում գրառում կատարելուց հետո, մի փոքր զրուցեց Հայաստանի Հանրապետությունում Իրանի փոխդեսպան Բահրամ Թոհերիի հետ:

Նա նշեց, որ իր ընտանիքը եւս Իրանից է՝ Նոր Ջուղայից, թեեւ ինքը Երեւանում է ծնվել:

«Այնպես որ, զգացողությունը նույնն է: Ցավակցություններս, Աստված օրհնի ու լուսավորի»,-ասաց նա:

Փոխդեսպանն իր հերթին նշեց. «Պետք է ասեմ, որ վերջին օրերին Հայաստանը եւ հայ ժողովուրդը շատը ջերմ վերաբերմունք ցուցաբերեցին եւ զորակցություն հայտնեցին մեզ, ինչի համար շնորհակալ ենք»:

Ձեռքսեղմումից հետո Բագրատ Սրբազանը հեռացավ:

«ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՈՒԺԵՂԱՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ

«Վերջին զանգի» միջոցառումներին ընդառաջ՝ ՆԳՆ Ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության պետի տեղակալ Էդգար Պետրոսյանը մի շարք ծառայակիցների հետ այցելել է Երեւանի թիվ 185 հիմնական եւ 112 ավագ դպրոցներ՝ «Վերջին զանգի» միջոցառումներին ընդառաջ իրազեկման հանդիպումներ անցկացնելու նպատակով:

Տնօրենների եւ մանկավարժների հետ հանդիպման ժամանակ նա նշել է, որ շատ կարեւոր է հասնել այն նպատակին, որ սովորութային նորմերը իրավական նորմերից ուժեղ չգտնվեն. աշակերտների՝ մեքենա վարելու, ճանապարհային երթեւեկության կանոնները խախտելու, վիճաբանությունների մեջ ներգրավվելու եւ հակահասարակական այլ երեւույթների դեպքում պատասխանատվությունը կիսելու են նաեւ ծնողները:

Հայաստանի Հանրապետությունում այս տարի վերջին զանգը հնչելու է 1547 կրթական հաստատություններում:

Երեւանի թիվ 185 հիմնական դպրոցի տնօրեն Էլմիրա Պողոսյանը նշել է, որ կարեւորում է ոստիկան-դպրոց համագործակցությունը: «Սերտ համագործակցում ենք ոստիկանության աշխատակիցների հետ: Նրանք հաճախ գալիս են դպրոց, հետաքրքվում են: Բարեբախտաբար, լուրջ խնդիրների չենք առնչվել: «Վերջին զանգի» միջոցառումների հետ կապված՝ մեզ այցելել են, հանդիպում է եղել աշակերտների հետ: Ընկերաբար զրուցել են, որ վտանգներից հեռու մնան: Իմ պաշտոնավարման չորս տարիների ընթացքում «Վերջին զանգի» կամ ավարտական երեկույթի ժամանակ չի եղել որեւէ խնդիր կամ միջադեպ: Իհարկե, դա նաեւ մեր իրավապահների շնորհիվ է»:

Ոստիկանները ծառայություն են իրականացնելու ոչ միայն դպրոցներում անցկացվելիք ավարտական միջոցառումների ընթացքում, այլեւ երեկոյան՝ տոնական խնջույքների վայրերի մոտակայքում, ընդ որում՝ ոչ միայն մայիսի 24-ին, այլ նաեւ մայիսի 25-ին, 26-ին եւ 27-ին:

Հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության պետի տեղակալ Էդգար Պետրոսյանը նշել է, որ կարեւորում է այն հանգամանքը, որ գործողությունների կարգը մանկավարժական կոլեկտիվների հետ նախապես համաձայնեցվել է: «Նախապես հանդիպումներ ենք անցկացնում մանկավարժական կոլեկտիվի եւ երեխաների հետ, առանձին-առանձին գործընթացներ են, համաձայնեցնում ենք մեր գործողությունները: Եթե կարիք լինի, որ ոստիկանությունը միջամտի՝ հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման կամ իրավախախտումների զսպման համար, ապա ինչպես կապ հաստատեն, որ ոստիկանի հետ կապի մեջ լինեն, եւ դա ինչպես պիտի կարգավորվի: Ոստիկանության կողմից ներկայացվում են նաեւ կարեւորագույն կանոնները, որոնք չպետք է խախտվեն: Կարեւոր է, որ ծնողներն իրենց հերթին նաեւ գիտակցեն, որ դեռեւս գործ ունեն երեխաների հետ, եւ պետք չէ տրանսպորտային միջոցը տրամադրել նրանց կամ թույլ տալ, որպեսզի անչափահասը ալկոհոլ օգտագործի կամ չարաշահի այն»:

«Վերջին զանգի» միջոցառումների ընթացքում իրավապահների խնդիրն է մանկավարժների եւ ծնողների հետ համագործակցված ապահովել աշակերտների անվտանգ օրը, որ չխաթարվի տոնական տրամադրությունը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՔՐԳՈՐԾԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

«Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանի եւ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աշոտ Սիմոնյանի քրեական գործը դատարանում է:

Հիշեցնենք, որ «Հայաստան» խմբակցության պատգամավոր, Արագածոտնի նախկին մարզպետ Աշոտ Սիմոնյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, մասնակցելով 2020 թվականի դեկտեմբերի 28-ին՝ ժամը 09:00-ից մինչեւ 11:30-ն ընկած ժամանակահատվածում Երեւան քաղաքի Դեմիրճյան փողոցում՝ Ազգային ժողովի մոտ անցկացվող հավաքին, խոչընդոտել է աշխատանքի վայր ժամանող Սիսակ Գաբրիելյանի երթեւեկը, հնչեցրել անպարկեշտ արտահայտություններ: Իրականում մի խումբ քաղաքացիներ վիրավորել էին Սիսակ Գաբրիելյանին, նա էլ քաղաքացիներին էր վիրավորել, հայհոյել, մյուս կողմը ձու էր նետել պատգամավոր Գաբրիելյանի ուղղությամբ:

Արդյունքում՝ երեկ ՔՊ-ականները միաձայն ընտրեցին ՍԴ դատավոր, որը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբայրն էր՝ Դավիթ Խաչատուրյանը:

ՔՊ-ականներից հետաքրքրվեցինք, թե իրենք մտավախություն ունենալո՞վ են ընտրել Սասուն Խաչատրյանի եղբորը:

Մեր հարցին ի պատասխան՝ ՀՀ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Սիսակ Գաբրիելյանն ասեց, որ իր մասնակցությունն ընտրությանը չի մեկնաբանի եւ չի նշի, թե ինչ ընտրություն է կատարել:

Պատգամավորը նշել է, որ Սահմանադրական Դատարանի դատավոր ընտրելու հարցում՝ թեկնածուի եւ Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարի եղբայրներ լինելը կապ չունի, քանի որ նա ԱԺ պատգամավոր է. «Ես մի քանի անգամ ավելի բարձր պաշտոնյա եմ, քան հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարը»:

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ՝ «ՋԻՋԻ»-Ի ԴԵՄ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը մայիսի 21-ին հարուցել է վարույթ «Ջիջի» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ՝ «gg» հավելվածի միջոցով անկանխիկ եղանակով պատվեր գրանցելիս ներկայացված արժեքը երթի ավարտին ավելացնելու, ինչպես նաեւ պատվերի ավարտի ժամանակ կոնկրետ գումար ներկայացնելու, սակայն դրանից ավել գումար գանձելու միջոցով դրսեւորված, հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների առերեւույթ առկայության հիմքով:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՄԱՐՏԱԿԱՆ ԱՏՐՃԱՆԱԿ

Մայիսի 21-ին՝ ժամը 21:46-ին, ՆԳՆ ոստիկանության Կոտայքի մարզի օպերատիվ կառավարման կենտրոն է զանգել Նոր Գյուղի մի բնակիչ եւ հայտնել է, որ քաղաքացին ալկոհոլի ազդեցության տակ ատրճանակով կրակում է:

Դեպքի վայր ոստիկանության Կոտայքի բաժնից օպերատիվ խումբ է մեկնել: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ժամը 21:30-ին գյուղի 18-րդ փողոցի տներից մեկի բակում ատրճանակով կրակել է Կոտայք գյուղի բնակիչ 39-ամյա տղամարդը:

Հետագա միջոցառումների արդյունքում՝ նա հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է ոստիկանության Կոտայքի բաժին: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել է «Բայկալ» տիպի մարտական ատրճանակ:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Աբովյանի քննչական բաժին:

Հանգամանքները պարզվում են:

ՍՊԻՏԱԿՑԻ ՀԱՅԿՈՅԻ ՈՐԴԻՆ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ

Երգիչ Հայկ Ղեւոնդյանի՝ Սպիտակցի Հայկոյի որդին՝ Հրաչյա Ղեւոնդյանն ազատ է արձակվել:

Այս մասին հայտարարություն են տարածել նրա փաստաբաններ Արամ Վարդեւանյանը, Ալեքսանդր Կոչուբաեւը եւ Էրիկ Ալեքսանյանը:

«Դատարանը մերժեց քննիչի [կալանավորման] միջնորդությունը՝ հիմնավոր կասկածի բացակայության հիմքով: Հրաչյա Ղեւոնդյանը ազատ արձակվեց դատական նիստերի դահլիճից», - ասված է պաշտպանների հայտարարության մեջ:

Հիշեցնենք՝ ՀՀ Քննչական կոմիտեն հաղորդագրություն էր տարածել, որտեղ նշված էր՝ Հ.Ղ.-ն, (Հրաչյա Ղեւոնդյան-խմբ.) քննությամբ դեռեւս չպարզված անձանց հետ, նպատակադրվել է զավթել իշխանությունը, այն է՝ մի խումբ անձանց հետ գրավել Հայաստանի Հանրապետության կառավարության, ՀՀ Ազգային ժողովի եւ ՀՀ ոստիկանության շենքերը, ինչպես նաեւ բռնություն գործադրելու միջոցով՝ տիրանալ Ազգային ժողովի եւ Կառավարության լիազորություններին, նպատակն իրականացնելու համար դիտավորությամբ ստեղծել են պայմաններ, այդ թվում՝ դիտարկել 2024 թվականի մայիսի 26-ին նախատեսվող հանրահավաքին այն իրագործելու հարցը:

Հայկ Ղեւոնդյանի փաստաբանական խումբը հայտարարություն էր տարածել, որ «ձայնագրության մեջ լսվող ձայնը Հ. Ղեւոնդյանինը չէ, հաջորդիվ այն հեռախոսահամարը, որով իբր թե կատարվել է խոսակցությունը, «Ավտոատվետչիկ» է եւ գոյություն չունի, հետեւաբար՝ մեղադրանքը ամբողջությամբ հորինվածք է»:

Ավելի ուշ Ղեւոնդյանին կալանավորելու միջնորդություն էր ներկայացվել:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 22-ից 23-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 94 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԳՈՒՄԱՐԻ ԻՆՔՆԱՆՊԱՏԱԿ ԲԱՇԽՈՒՄ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը որոշում է ընդունել Նունուֆար Հակոբյանին մայիսի 17-ից նշանակել Հովքի միջնակարգ դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող: Համացանցում ներկայացված են դպրոցական սննդի ծրագիրն իրականացնելու համար Հովքի դպրոցի բազում կարիքները: Այդ միջնակարգ դպրոցի ճաշարանն ունի զարգացման ու բարելավման կարիք, դպրոցն ունի ջեռուցման համակարգի ստեղծման անհրաժեշտություն, ճաշարանային գույքի համալրում է պետք, նոր սեղանների, աթոռների կարիք կա: Խոհանոցում սպասքի պահարանի, էլեկտրական վառարանի անհրաժեշտություն: Անհրաժեշտ է ձեռք բերել ճաշարանային սպասք՝ ափսեներ, թասեր, գդալներ, բաժակներ, պատառաքաղներ, թեյնիկ, կաթսաներ, շերեփներ, տարաներ, սկուտեղներ: Հովքի միջնակարգ դպրոցի տնօրեն Սեդա Ասիրյանից տեղեկացանք, որ դպրոցը 56 աշակերտ ունի: Մարզպետը, փոխանակ 56 աշակերտ ունեցող Հովքի դպրոցի բազում տնտեսական խնդիրները լուծի, պետբյուջեի մեծ գումարները Հովքի դպրոցի վարչատնտեսական մասի համակարգողի վարձատրությանն է ուղղել: Թե վարչատնտեսական մասի համակարգողը ինչ գումարներով է լուծելու Հովքի դպրոցի տնտեսական խնդիրները, հայտնի չէ:

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային էջից տեղեկանում ենք, որ Դիլիջան համայնքի բնակիչ Գնել Քեռյանի (հասցեն՝ ՀՀ, ք. Դիլիջան, Գետափնյա փողոց 86, բն. 12,) եւ Դիլիջանի համայնքապետարանի միջեւ 02.05.2024թ. կնքված թիվ 01-020524 նվիրաբերության պայմանագրով Գնել Քեռյանը Դիլիջանի համայնքապետարանին է նվիրել LADA NIVA LEGEND 21214-BOA-52 մակնիշի (մարդատար ավտոմեքենան՝ 4 280 000 (չորս միլիոն երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ արժեքով, սեփականության իրավունքով: Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանն առաջարկություն է ներկայացրել նշված մարդատար ավտոմեքենան ընդունել որպես նվեր եւ ընդգրկել Դիլիջանի համայնքապետարանի հաշվեկշռում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Մայիսի 10-ին համայնքի ավագանին միաձայն՝ 12 կողմով քվարկել է Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի առաջարկին: Չի կարող բացառվել, որ սա ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանի գործարքներից է , ավտոմեքենայի նվիրատվության տակ այլ բան է թաքցված: Դիլիջանի ավագանին նույն՝ մայիսի 10-ի նիստում հաստատել է Երեւանի բնակիչ Լեւոն Մանուչարյանի կողմից Դիլիջան համայնքին կահավորված, տեխնիկապես զինված, եգիպտացորեն վաճառելու համար նախատեսված 25 տնակների նվիրատվությունը Դիլիջանի համայնքապետարանին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱԴՐԲԵՋԱՆԸ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ԻՆ

ԿՈՉ Է ԱՆՈՒՄ «ՓՐԿԵԼ» ԿՈՆԴԸ

Իր ագրեսիվ ու ծավալապաշտական, հակահայկական օրակարգի շրջանակում Ադրբեջանը շարունակում է կեղծ տեղեկատվական ու քարոզչական արշավը:

Այս մասին հայտարարություն է տարածել «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամը՝նկատելով, որ տարիներ շարունակ ջանք ու ռեսուրս չխնայելով՝ հարեւան երկիրը փորձում է ավելի քան 2800-ամյա Երեւանը ներկայացնել ադրբեջանական:

«Ադրբեջանի հերթական թիրախը Երեւանի Կոնդ հնագույն թաղամասն է: Կոնդը, որն իր անվանումը ստացել է բարձր դիրքի շնորհիվ, պարսից տիրապետության ժամանակ վերանվանվել է «թափաբաշ» (բլուրի գլուխ): Թաղամասի հնագույն հուշարձաններից է 7-րդ դարում հիմնադրված Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, որն ավերվել է 1679 թվականի երկրաշարժի ժամանակ եւ վերականգնվել 1710 թվականին:

Կոնդ թաղամասի անունը ադրբեջանցիները շրջանառում են վերափոխված «թեփեբաշի» տարբերակով: Ադրբեջանի՝ նման քարոզարշավը նոր երեւույթ չէ. դեռեւս 2022թ. հուլիսի 7-ին ադրբեջանցի «մշակութային ու հասարակական գործիչները» դիմել էին Միավորված ազգերի կրթության, գիտության եւ մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) գլխավոր տնօրեն Օդրի Ազուլեին՝ Երեւանում «ադրբեջանական պատմամշակութային ժառանգության ոչնչացումը» կանխելու կոչով:

2024թ. մայիսի 7-ին Ադրբեջանը, այս անգամ հասարակական կազմակերպությունների անունից, կրկին դիմել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Օդրի Ազուլեին՝ Կոնդի պահպանմանն ուղղված կոչով: Ստորագրողների թվում են, այսպես կոչված, «Արեւմտյան Ադրբեջանի համայնք», «Իրեւանի մշակութային ժառանգության քարոզչություն», «Զանգեզուր միություն» եւ հասարակական այլ կազմակերպություններ, որոնց անուններն արդեն իսկ բացահայտորեն արտացոլում են իրենց օրակարգն ու գործունեության նպատակը:

Մի կողմ թողնելով Կոնդի՝ ադրբեջանական չլինելու փաստը՝ այս հայտարարությունը պարադոքսալ է՝ հաշվի առնելով Նախիջեւանում, Արցախում եւ այլ վայրերում հայկական պատմամշակութային արժեքների բացահայտ թիրախավորման Ադրբեջանի քաղաքականությունը եւ փաստագրված ոչնչացումները:

Ավելին՝ հայտարարության մեջ Ադրբեջանը նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ երկխոսության եւ փոխգործակցության պատրաստակամություն է հայտնում՝ Հայաստանում «ադրբեջանական մշակութային ժառանգության ոչնչացումը» կանխելու նպատակով, ինչպես նաեւ կոչ անում՝ «փաստահավաք առաքելություն ուղարկել Երեւան...»: Նման կոչը հեգնական է ու հերթական պարադոքսը. ՅՈՒՆԵՍԿՕ-ն 2020 թվականին անկախ տեխնիկական առաքելություն ստեղծելու պատրաստակամություն էր հայտնել՝ գնահատելու Արցախում մշակութային արժեքների կարգավիճակը: Ադրբեջանը, սակայն, խոչընդոտել էր առաքելության մուտքն Արցախ՝ մարտահրավեր նետելով միջազգային կառույցներին ու նրանց գործունեությանը՝ ընդգծելով նաեւ Արցախում հայկական ժառանգության ոչնչացումը հաստատող փաստերը քողարկելու իր փորձերը:

Այսպիսով՝ Երեւանի Կոնդ թաղամասի «ադրբեջանականացման» քարոզարշավն Ադրբեջանի ավելի լայն քաղաքական օրակարգի բացահայտ դրսեւորումն է՝ ուղղված պատմությունը խեղաթյուրելուն ու Հայաստանի տարածքների նկատմամբ իր հավակնությունները ներկայացնելուն: Միջազգային հանրության կողմից համապատասխան քայլեր չձեռնարկելու պայմաններում հայկական պատմամշակութային արժեքների ոչնչացումը տագնապալի մասշտաբների է հասել. գրավված Արցախում այսօր առնվազն 1456 հայկական պատմամշակութային հուշարձան գտնվում է Ադրբեջանի վերահսկողության տակ»,- ասված է հայտարարության մեջ:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՍԻՐՈՂԱԿԱՆ ԱՍՏՂԱԳԵՏԸ ԳԱԼԱԿՏԻԿԱՆԵՐ Է ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Իտալացի սիրողական աստղագետ Ջուզեպպե Դոնաթիելլոն հայտնաբերել է հինգ նոր գաճաճ գալակտիկաներ, որոնք պտտվում են հեռավոր պարուրաձեւ գալակտիկայի շուրջ, որը Երկրից տեսանելի ամենամեծ գալակտիկաներից մեկն է: Նոր գալակտիկաներն ստացել են նրա անունը՝ Դոնաթիելլո V, VI, VII, VIII եւ IX եւ լրացնում են նրա անունը կրող երկնային մյուս մարմինների աճող ցանկը:

Նոր հայտնաբերված արբանյակ գալակտիկաները պտտվում են Քանդակագործ գալակտիկայի շուրջը, որը նաեւ հայտնի է որպես NGC 253: Նրանց հայտնաբերումը կարեւոր է այն պատճառով, որ դրանք ծայրահեղ աղոտ են երեւում եւ Երկրից հեռու են մոտ 11,5 միլիոն լուսատարի եւ կարող են թույլ տալ պատկերացում կազմել տիեզերքի ամենահին աստղերի, մութ նյութի բաշխման մասին եւ կարող են ազդել ներկայիս տիեզերական մոդելների վրա:

Հայտնի է, որ Քանդակագործ գալակտիկայում կա ընդհանուր առմամբ 18 գաճաճ գալակտիկա, դրանցից երեքը հայտնաբերվել են 2021-ին: Այս գտածոների հայտնաբերումը նաեւ մարտահրավեր են նետում տիեզերագիտության գոյություն ունեցող մոդելներին, մասնավորապես Laշbda Cold Dark Matter (LCDM) մոդելին: Ըստ այս մոդելի՝ մեծ գալակտիկաների շուրջ արբանյակ գալակտիկաների շատ ավելի մեծ քանակ պետք է լինի, քան ներկայումս դիտվում է: Օրինակ՝ այս մոդելի սիմուլյացիան ենթադրում է, որ մեր հարեւան Անդրոմեդա գալակտիկան պետք է հյուրընկալի 500-ից 1000 արբանյակային գալակտիկաներ, սակայն մինչ այժմ հայտնաբերվել են միայն 39-ը:

ՇԵՆԳԵՆ ԱՆՑԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ ԿԲԱՐՁՐԱՆԱ

2024թ. հունիսի 11-ին Շենգենյան անցագիրը մեծահասակների համար կարժենա 90 եվրո, 6-12 տարեկան երեխաների համար՝ 45 եվրո. նշված է Եվրահանձնաժողովի՝ Եվրամիության պաշտոնական ամսագրում հրապարակված որոշման մեջ:

Փաստաթղթի համաձայն՝ այն երկրների հայտատուները, որոնք չեն համագործակցել անօրինաբար ԵՄ տարածքում գտնվող իրենց քաղաքացիների ռեադմիսիայի հարցում, անցագրի համար կվճարեն մաքսատուրք՝ 135 կամ 180 եվրո՝ կախված խորհրդի որոշումից:

Տուրքը բարձրացնելու մասին որոշումն ընդունվել է դեռեւս մարտի 14-ին, բայց ուժի մեջ կմտնի ԵՄ ամսագրում հրապարակվելուց հետո՝ 12-րդ օրը: Մինչ այդ տուրքի գումարի բարձրացման մասին ամբողջ աշխարհում տեղեկացրել էին Սլովենիայի եւ Ֆինլանդիայի արտաքին գործերի նախարարությունները:

Այժմ Շենգենյան անցագրի արժեքը մեծահասակների համար կազմում է 80 եվրո, երեխաների համար՝ 40: Եվրահանձնաժողովը բարձրացումը 12,5 տոկոսով բացատրել է գնաճով:

Անցագրի տուրքի վերանայման անհրաժեշտությունը Եվրահանձնաժողովը գնահատում է «օբյեկտիվ չափորոշիչների» հիման վրա, այդ թվում՝ ԵՄ-ում գնաճի եւ պետծառայողների միջին աշխատավարձերի մակարդակով:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար. 21 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՔԱՐՏՈՎ ԳՈՐԾԱՐՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՉԵՆ ԱՊԱՀՈՎԵԼ

Պետական եկամուտների կոմիտեն հայտնում է, որ ՀՀ տարբեր բնակավայրերում POS տերմինալների կիրառման արդյունքում նախկինում զրոյական գործարքներ գրանցած հարկ վճարողների մոտ իրականացվել է հարկային վարչարարություն:

Ստուգում է իրականացվել 1038 հարկ վճարողի մոտ, որի արդյունքում վճարային քարտերի միջոցով անկանխիկ վճարման ընդունման հնարավորություն չի ապահովել 545 հարկ վճարող եւ արձանագրված խախտումը կազմել է 169.3 մլն դրամ:

Կոմիտեն հիշեցնում է, որ հսկիչ դրամարկղային մեքենաներ կիրառելու պարտավորություն ունեցող հարկ վճարողները, «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն, պարտադիր պետք է ապահովեն վճարային քարտերի միջոցով անկանխիկ վճարման ընդունման հնարավորություն:

Միաժամանակ հիշեցնում ենք, որ կենսաթոշակառուներն ու նպաստառուները ՀՀ տարածքում գործող առեւտրի կետերում ու ծառայություններ մատուցող կազմակերպություններում անկանխիկ գործարքներ կատարելու դեպքում ստանում են հետվճար՝ կատարած գործարքների հանրագումարի 10%-ի չափով, բայց ոչ ավելի, քան 5000 դրամը:

ՇՐՋԱՅՑ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռուստամ Բադասյանը Մարգարայի անցակետում հյուրընկալել է Հայաստանում Եվրամիության դեսպան Վասիլիս Մարագոսին եւ նրա ղեկավարած պատվիրակությանը:

Կոմիտեի ղեկավարը եւ դեսպանը համատեղ շրջայց են կատարել անցակետի տարածքում:

Ներկայացվել է անցակետի ամբողջ ենթակառուցվածքը, ընթացակարգերի կիրառման եւ կազմակերպման հերթականությունը:

Ընդգծվել է, որ Մարգարայի մաքսակետում, ինչպես Հայաստանի մյուս անցակետերում, պետական սահմանային հսկողությունը նախատեսված է իրականացնել սահմանային համալիր կառավարման սկզբունքի հիման վրա՝ «մեկ պատուհան» համակարգով:

Անցակետի հիմնական շինարարական աշխատանքներն իրականացվել են կարճ ժամանակահատվածում՝ մոտ վեց ամսվա ընթացքում, կապիտալ նորոգումն ամբողջությամբ ավարտվել է:

Այցի ընթացքում անդրադարձ է կատարվել վերջին շրջանում ՊԵԿ բարեփոխումներին, ինչպես նաեւ միջազգային համագործակցության շրջանակում հարկային եւ մաքսային ոլորտներում արդեն իսկ ձեռքբերված պայմանավորվածությունների իրագործման ընթացքին: ԵՄ դեսպանը գոհունակություն է հայտնել անցակետում իրականացված աշխատանքներից:

ԱՃ՝ 72 ՏՈԿՈՍՈՎ

ՊԵՏԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ

Կառավարությունն իր՝ մայիսի 23-ի նիստում հաստատեց Պետական գույքի կառավարման ծրագրի՝ 2023 թվականի տարեկան հաշվետվության մասին որոշման նախագիծը:

ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը, ներկայացնելով նախագիծը, նշեց, որ հաշվետվությունը ներառում է Պետական գույքի կառավարման կոմիտեի՝ 2023 թվականի ամբողջ գործունեությունը՝ մասնավորեցումների, լուծարման գործընթացների, գործարքների, օտարումների, վարձակալությունների, ալեհավաքների եւ մի շարք այլ ծառայությունների, ինչպես նաեւ ներդրումային մի շարք այլ պարտավորությունների կատարման մասին տեղեկատվությունները:

«Բավականին հաջողված տարի է եղել, որովհետեւ բոլոր ուղղություններով ունենք ակնհայտ տարբերություններ նախորդ տարվա համեմատ: Մասնավորապես՝ 2023-ի ընթացքում պետական գույքի կառավարումից ստացված միջոցները կազմել են 15,4 մլրդ դրամ, եւ այս մուտքերը հիմնականում եղել են պետբյուջե, համայնքային բյուջեներ եւ ՊՈԱԿ-ների բյուջեներ: Այս 15,4 միլիարդից 2,2 մլրդ դրամը մուտք է եղել մեր համայնքների բյուջեներ՝ աջակցելով համայնքներին այդ միջոցներով այլ ծրագրեր իրականացնել:

Այս 15,4 միլիարդի բացվածքը հետեւյալն է. գույքերի օտարումից՝ 10,6 մլրդ, բաժնեմասի մասնավորեցումից՝ 3,8 մլրդ, վարձակալությունները՝ 673 մլն դրամ, եւ ալեհավաքները, դրանց տեղադրումը՝ 287 մլն դրամ:

15,4 մլրդ դրամը նախորդ տարվանից ավելի է 6,4 մլրդ դրամով կամ 72 տոկոսով»,- ասաց նա:

Նախարարը նաեւ տեղեկացրեց, որ, բացի այս գումարներից՝ գործարքներով ստանձնել են նաեւ 34 միլիարդ դրամի պարտավորություններ, որպեսզի առաջիկա 5 տարիներին գործընկեր կազմակերպությունները նաեւ 34 միլիարդ դրամի ներդրումային ծրագրեր իրականացնեն: Օտարվել է 38 գույք, որոնք արդեն որոշակի տնտեսական էֆեկտ են տվել:

Թեմայի շրջանակում պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահ Առնակ Ավետիսյանը տեղեկացրեց՝ առաջիկայում կգործարկվի օնլայն աճուրդների համակարգը, որտեղ ամփոփված կլինեն պետական՝ շարժական եւ անշարժ գույքերի օտարման աճուրդային գործընթացները: Մեկ հարթակի միջոցով ներդրողները հնարավորություն կունենան մասնակցելու մրցույթներին եւ օնլայն միջավայրում իրականացնել գործարքներ՝ գույքի հետ կապված:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 10 հունիսի 2024 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, քաղաք Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտերի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

1. Լոտ՝ ՀՀ, ք. Երեւան, Շենգավիթ, Արշակունյաց պողոտա, 56 շենք, 22 հասցեում գտնվող 70 քմ բնակարան,

Լոտի մեկնարկային գինը՝ 42000000 (քառասուներկու միլիոն) ՀՀ դրամ:

2. Լոտ՝ ՀՀ, Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., Օրբելյանների փողոց, 15 հասցեում գտնվող 161,8 քմ բնակելի տուն, 87,7 քմ հացատուն եւ 0,052 հա հողամաս,

Լոտի մեկնարկային գինը՝ 25000000 (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ:

3. Լոտ՝ ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն, Ծ. Իսակովի պողոտա, 4 շենք, 9 հասցեում գտնվող 90,47 քմ բնակարան,

Լոտի մեկնարկային գինը՝ 70000000 (յոթանասուն միլիոն) ՀՀ դրամ:

- Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար),

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

- ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,
- իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտերին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝ llcbst@yahoo.com

հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31

հեռ.՝ +374 11 56 45 13

կայք՝ www.llcbst.am, www.borsa.am

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՊԻՄՆ ԷՐ ՄԵՂՔԸ

ԲԱՑՈՒՄՆ ԱՅԴՊԵՍ ԷԼ ՉԱՐՎԵՑ

«Մի շարք զովազդային արշավներից հետո Ծաղկաձորում նոր մշակութային կենտրոն դառնալու հեռանկարներ ունեցող Coma club ժամանցային վայրը չի բացվի», - հայտնել է հումորիստ, դերասան, երաժիշտ Գարիկ Պապոյանը, որի նախաձեռնությամբ էլ ակումբը պետք է գործեր Ծաղկաձորում:

«Տեղական ինքնակառավարման մարմինները որոշել են, որ ճանապարհները քանդելու ճիշտ ժամանակը Ծաղկաձորի տուրիստական սեզոնն է: Այն, ինչ արեց քաղաքապետարանը բացումից օրեր առաջ՝ անելով դա գարնան պասիվ ամիսներին, ես համարում եմ, կուրորտային տարածաշրջանի կառավարման նրբությունների տոտալ անտիրապետում», - սոցիալական ցանցերում հրապարակած տեսանյութում բացատրել է Գարիկ Պապոյանը: Նա նշել է՝ Coma club-ը եղել էր երազանք, որը դերասան-երաժիշտի խոսքով՝ պիտի «նոր, աննախադեպ մշակութային շունչ հաղորդեր Ծաղկաձորին՝ ստեղծելով երաժշտական նոր «ուիքենդային» մշակույթ»:

Տեսանյութի նկարագրության հատվածում Գարիկը նաեւ հավելել է՝ «այսքան պարտությունների ու հիասթափության մեջ, մեկ է՝ մեջտեղից կիսվելով ու իմ ունակությունների չափով՝ փորձում եմ մի բան ստեղծեմ, մի օգուտ տամ մեր պետությանը. բայց ախր մի քիչ էլ պիտի «պետությունենք» ուզեն...»:

«Ժողովուրդ» օրաթերթը կապվեց Ծաղկաձոր խոշորացված համայնքի Նարեկ Հարությունյանի հետ, որը վստահեցրեց, որ մինչ Coma club-ի բացումը կհասցնեին ճանապարհի շինարարությունն ավարտել:

-Հարցը Գարիկ Պապոյանին ուղղե՞լ եք, նա կարծես սխալվել է այդ հարցում: Այդտեղ զրոյից անցկացվում է ամբողջ թաղամասի ու քաղաքի կոյուղագիծ, որը չեմ կարծում, թե խնդիր է: Նշված ժամանակի մեջ էլ համայնքապետարանը տեղավորվում էր, այսինքն, եթե իրենք ուզում են մայիսի 31-ին բացում անել, արդեն հասել ենք իրենց հատված:

-Այսինքն՝ կստացվե՞ր այս հարցն առանց խնդրի լուծել:

-Այո՛, ուղղակի, երեւի թե, մեր դերասան Գարիկ Պապոյանը քաղաքաշինական որեւէ բանի չի տիրապետում. բայց եթե ինքը գար, տեղում կտեսներ՝ ինչ աշխատանքներ են կատարվում, եւ ընդամենը 1-2 օր հետո ամբողջությամբ այդ աշխատանքները ավարտվելու էին եւ իրենց՝ մայիսի 31-ի համերգին ոչնչով չէին խանգարելու:

Գարիկ Պապոյանը համայնքապետարան չի դիմել, որեւէ մեկին որեւէ բան չի հարցրել. իսկ երբ նա ավարտական փաստաթուղթ է ստացել, այս նախագիծն արված էր եւ կոյուղագիծն արդեն անցկացնում էին անցած տարվանից, իսկ ինքը փաստաթուղթ ստացել է հունվար-փետրվար ամիսներին: Ոչինչ, բայց կարող էր հարցնել, հարցուփորձ անել, իմանալ՝ երբ ենք ավարտելու: Շինարարը ժամկետ ունի եւ ավարտելու էր իր ժամկետի մեջ, դա իրենց չէր էլ խանգարում:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապվել նաեւ Գարիկ Պապոյանի հետ, սակայն նա մեր զանգերին չպատասխանեց:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՐԶՈՒՄԸ՝ ԹԱԻԼԱՆԴՈՒՄ

Հայաստանի բռնցքամարտի կանանց եւ տղամարդկանց հավաքականներն առաջին մարզումն են անցկացրել Թաիլանդում:

Թաիլանդում մեկնարկում է Փարիզի Օլիմպիական խաղերի վարկանիշային վերջին մրցաշարը:

Հավաքականում են՝ Բարեղամ Հարությունյանը (51 կգ), Արթուր Բազեյանը (57 կգ), Նարեկ Հովհաննիսյանը (63,5 կգ), Գուրգեն Մադոյանը (71 կգ), Ռաֆայել Հովհաննիսյանը (80 կգ), Նարեկ Մանասյանը (92 կգ), Դավիթ Չալոյանը (92+), Անուշ Գրիգորյանը (52 կգ), Եկատերինա Սիչովան (54 կգ), Անի Հովսեփյանը (66 կգ):

Միջազգային օլիմպիական կոմիտեի հովանու ներքո անցկացվող մրցաշարը վերջինն է, որտեղ բռնցքամարտիկները կկարողանան ուղեգիր նվաճել Փարիզի 33-րդ ամառային Օլիմպիական խաղերի համար:

Հայաստանի դեռեւս ոչ մի ուղեգիր չի նվաճել բռնցքամարտում:

ՀԱՄԱՁԱՅՆԵԼ Է ԳԼԽԱՎՈՐԵԼ «ՅՈՒՎԵՆՏՈՒՍԸ»

«Բոլոնիայի» գլխավոր մարզիչ Տիագո Մոտան, ամենայն հավանականությամբ, 2024/25 մրցաշրջանը կսկսի Թուրինի «Յուվենտուսում»:

Sky Sport Italia-ն գրում է, որ 41-ամյա մասնագետը համաձայնել է գլխավորել թուրինյան ակումբը: Կողմերը կնքելու են 3 տարվա պայմանագիր: Մոտային վճարվելու է տարեկան 5 միլիոն եվրո աշխատավարձ:

Ինսայդեր Ֆաբրիցիո Ռոմանոն հայտնում է, որ «Յուվենտուսը» ավելի քան 6 ամիս աշխատել է Մոտային գլխավոր մարզիչ նշանակելու համար:

Հիշեցնենք, որ մայիսի 17-ին «Յուվենտուսը» Մասիմիլիանո Ալեգրիին հեռացրել էր գլխավոր մարզչի պաշտոնից:

Մոտան «Բոլոնիան» մարզում է 2022 թ. սեպտեմբերից: Ակումբը ընթացիկ մրցաշրջանում 60 տարվա ընդմիջումից հետո նվաճել է Չեմպիոնների լիգայի ուղեգիր:

ՀԱՅՏՆԻ ԵՆ ԵԶՐԱՓԱԿԻՉՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՈՒԵՖԱ-ի գործադիր կոմիտեն ընտրել է այն քաղաքները, որոնք առաջիկա 2 մրցաշրջաններում ընդունելու են եվրագավաթային մրցաշարերի եզրափակիչները:

2025-26 մրցաշրջանում Չեմպիոնների լիգայի եզրափակիչը կընդունի Բուդապեշտը: Եվրոպա լիգայի որոշիչ հանդիպումը կկայանա Ստամբուլում, իսկ Կոնֆերենցիաների լիգայի եզրափակիչը՝ Լայպցիգում:

Հաջորդ մրցաշրջանում Կոնֆերենցիաների լիգայի եզրափակիչը կրկին կընդունի Ստամբուլը, իսկ Եվրոպա լիգայի գլխավոր հանդիպումը կկայանա Ֆրանկֆուրտում:

ԼՈՒՐԵՐ

ԱՐՁԱԳԱՆՔ՝ ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆԻՆ

Արարատ քահանա Պողոսյանն արձագանքել է Նիկոլ Փաշինյանի՝ Պապ թագավորի մասին հայտարարություններին. «Այլեւս ոչ մի եկեղեցական բրածեծ չի լինելու, չի թունավորվելու, խեղդամահ չի արվելու, չի աքսորվելու, չի հալածվելու...

Վերջին տարիներին որոշ քաղաքական գործիչներ մեղադրում են Հայ Եկեղեցուն՝ Պապ թագավորի դավադրաբար սպանության մեջ: Այս վարկածին տուրք տվողները որեւէ աղերս չունեն ո՛չ հայ եւ ո՛չ էլ համաշխարհային պատմագրության եւ պատմագիտության հետ:

Պապ թագավորը, ի տարբերություն մերօրյա իշխանավորների, խորապես գիտակցում էր Հայ Եկեղեցու եւ եկեղեցականության դերն ազատագրական պայքարում (Հայոց պատմություն, հ. II, գիրք առաջին, Երեւան, 2018, էջ 121): Մերօրյա պատմագիտական միտքը, համադրելով հայ եւ օտար պատմիչների հաղորդած տեղեկությունները, փաստում է, որ թագավորի սպանությունը բացառապես պայմանավորված էր նրա վարած արտաքին քաղաքականությամբ, մասնավորապես՝ հայ-պարսկական եւ հայ-հռոմեական հարաբերություններով (Հայոց պատմություն, հ. II, գիրք առաջին, Երեւան, 2018, էջ 138): Հայ-պարսկական հարաբերությունների կարգավորմանը միտված թագավորի քաղաքականությունն ի վերջո առաջացրեց Հռոմեական կայսրության դժգոհությունը: Եվ հենց Հռոմեական կայսրությունը դավադրաբար կազմակերպեց Պապ թագավորի սպանությունը (Հայոց պատմություն, հ. II, գիրք առաջին, Երեւան, 2018, էջ 139-143), եւ եկեղեցին որեւէ դերակատարություն եւ որեւէ մասնակցություն չի ունեցել: Սա գիտություն է, փաստ է, եւ ոչ ոք չի կարող որեւէ ամբիոնից բռունցքով հարվածել այս փաստմեխին:

Իսկ եթե կարելի է անտեսել փաստերը, ապա չենք բացառում, որ մոտ ապագայում Հայոց եկեղեցին նաեւ մեղադրվի գրերի գյուտի, թարգմանական եւ ինքնուրույն գրականություն ստեղծելու, գրատպության, ճարտարապետության, բժշկագիտության, տոմարագիտության, ազատագրական պայքարի, հայդուկային շարժման համար...

Այո՛, համակարծիք ենք, որ ոչ միայն Պապ թագավորը չի սպանվելու, այլեւ չեն սպանվելու Տրդատ Մեծը, Խոսրով Կոտակը, Արշակ Երկրորդը, Վռամշապուհը....: Սակայն, հարկ ի լուր եւ ի հեճուկս հողմաղացների դեմ մերկ ձեռքերով պայքարողների՝ հայտարարել, որ այլեւս ոչ մի եկեղեցական բրածեծ չի լինելու, չի թունավորվելու, խեղդամահ չի արվելու, չի աքսորվելու, չի հալածվելու»:

ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ ՆՈՐ ՌԵԿՏՈՐ ՈՒՆԻ

Կառավարությունն իր երեկվա՝ մայիսի 23-ի նիստում հաստատեց «Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» հիմնադրամի ռեկտորի ընտրության արդյունքները:

Ռեկտորի ընտրությունը կայացել է երկու փուլով, որի արդյունքում Վարդան Լեւոնի Ազատյանն ընտրվել է ռեկտորի պաշտոնում՝ 5 տարի ժամկետով:

Վարդան Ազատյանը արվեստաբան է, հայագետ, փիլիսոփայության թարգմանիչ, ավելի քան 20 տարի դասավանդում է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում: Դասախոսել է մի շարք բուհերում, այդ թվում արտերկրի: 2014-ին հիմնադրել է Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտը»:

● Մայիսի 28-ին՝ ժամը 21:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ազնավուր» ներկայացումը՝ նվիրված մեծ շանսոնիեին: Տոմսերի արժեքը՝ 4000, 6000, 8000 դրամ:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ ինչպիսի պարտականություններ ունեն ծառայողական քննության կողմերը:

Վազգեն Սաֆարյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ծառայողական քննության կողմը պարտավոր է՝

ա) ծառայողական քննություն վարողի պահանջով ներկայանալ քննության կատարման վայր եւ տալ բացատրություններ (լրացուցիչ բացատրություններ), մասնակցել այլ անհրաժեշտ գործողությունների եւ ստորագրությամբ հաստատել դրանց կապակցությամբ կազմված արձանագրությունների (տեղեկանքների) ճշտությունը, իսկ չստորագրելու դեպքում՝ ներկայացնել գրավոր պատճառաբանություն,

բ) ծառայողական քննություն վարողի պահանջով ներկայացնել քննության համար անհրաժեշտ իր մոտ եղած առարկաները եւ փաստաթղթերը,

գ) ենթարկվել ծառայողական քննություն վարողի՝ ծառայողական քննություն անցկացնելու կարգով սահմանված պահանջներին:

Հայաստանի Հանրապետության
քաղաքացիական ծառայության խորհուրդ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծառայողական քննության ընթացքում ծառայողական քննության կողմերն ունեն նաեւ իրավական ակտերով, ինչպես նաեւ ծառայողական քննություն անցկացնելու կարգով իրենց վերապահված այլ պարտականություններ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ապա ինչպե՞ս է վճարվում նրա կենսաթոշակը:

Գրետա Հարությունյան (71 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գ. Հարությունյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ապա պետք է գրավոր դիմի բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը նախկին բնակության վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումից գրավոր պահանջում է կենսաթոշակի գործը եւ այն ստանալուց հետո շարունակում վճարել կենսաթոշակը:

Կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակառուի նախկին բնակության վայրում կենսաթոշակի վճարումը դադարեցնելու օրվանից:

Կենսաթոշակային
համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավելացնենք, որ եթե կենսաթոշակը վճարելը դադարեցվել է, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել: Ի դեպ, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է միանվագ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի

Սա Հայաստանում է. այս փոշու ամպերը Կոտայքի մարզում Երեւան-Սեւան միջպետական ճանապարհատվածի ավազի հանքերի շահագործման արդյունքում են կուտակվել:

Մեր տեսախցիկը ֆիքսել է, թե ինչպես են փոշու ամպերը կուտակվում օդում աղտոտելով մթնոլորտը, իսկ տեղանքում օդի աղտոտվածության շեմը չափող որեւէ սարք համոզված ենք՝ չկա:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ________________

Ազգանուն՝ ________________

Առաքման հասցե՝ ________________

Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ________________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+ 2 + 6 +14 + 18
Կոտայքի լեռներ	+ 2 + 6 +13 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 11 +19 + 21
Գեղարքունիք	+ 2 + 5 +13 + 17
Լոռի	+ 3 + 5 +13 + 16
Տավուշ	+ 7 + 10 +17 + 19
Արագածոտնի լեռներ	+ 2 + 4 +12 + 14
Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 11 +19 + 23
Արարատ	+9 + 12 +22 + 24
Արմավիր	+ 8 + 11 +22 + 24
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +13 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 11 +22 + 24
Սյունիքի հովիտներ	+ 8 + 12 +18 + 21
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 +14 + 17
ԼՂՀ	+ 5 + 9 +14 + 16
Երեւան	+ 16 + 18 + 21 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.5.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*